ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ.098025050, hnaberd.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 26

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 10 հերթական նիստի օրակարգը.

1. 2020 թվականի համար Հնաբերդ համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050, էլ.հասցե hnaberd.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2019 թվականի N 27-Ն

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ մասի, <<Տեղական տուրքերի և վճարների>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,13-րդ,14-րդ հոդվածների և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հնաբերդ համայնքում 2020 թվականի համար սահմանել
1/տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի,
2/տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի,
2. Ուժը կորցրած ճանաչել Հնաբերդ համայնքի ավագանու 2018 թվականի թիվ 33-Ն որոշումը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Արարատի մարզի Հնաբերդ համայնքի
ավագանու 2019 թվականի նոյեմբերի 19-ի
թիվ 27-Ն որոշման

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Հ/Հ	Տեղական տուրքերի անվանումը	Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/
1.	Հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝	
	Հիմնական օբյեկտների համար՝ 1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար	7 500
	2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	15 000
	բ. 501 –ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	50 000
	գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	25 000
	դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	50 000
	Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ 3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	1 500
	4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	2 500
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
	1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն	1 500
	2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի	

	1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.	
	3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը	
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար	2 500
4.	<u>Համայնքի տարածքում՝</u> <u>1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝</u>	
	<u>Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>7 500</u>
	<u>26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>9 750</u>
	<u>51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>15 000</u>
	<u>101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>18 750</u>
	<u>201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>33 750</u>
	<u>501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>75 000</u>
	<u>2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար</u>	
	<u>Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>7 500</u>
	<u>26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>9 750</u>
	<u>51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>15 000</u>
	<u>101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>18 750</u>
	<u>201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում</u>	<u>33 750</u>
	<u>501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ</u>	<u>75 000</u>

	հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	
5.	Համայնքի տարածքում՝ 1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվություն՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 1 քառակուսի մետրի համար	263
	2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար	45 000
	3) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար, հիմնական շինությունների ներսում՝	
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	3 750
	բ. 26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	7 500
	գ. 51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	11 250
	դ. 101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	15 000
	ե. 201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	22 500
	զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	37 500
	4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար, ոչ հիմնական շինությունների ներսում՝	
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	750
	բ. 26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	1 500
	գ. 51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	3 000
	դ. 101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	6 000
	ե. 201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	11 250
	զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	18 750
6.	Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար	37 500

7.	Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար	
	1) առևտրի օբյեկտների համար	37 500
	2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	75 000
	3) բաղնիքների(սաունաների) համար	375 000
	4) շահումներով խաղերի կազմակերպման համար	375 000
	5) վիճակախաղերի կազմակերպման համար	112 500
8.	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ մեկ քառակուսի մետրի համար՝	
	1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	1 500
	2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2 625
	3) այլ արտաքին գովազդի համար	1 125
	4/սոցիալական գովազդի համար	0
8.1	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի համար /1.5*25%=0.375/:	282
	Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան /1.5*10%=0.150/:	113
9.	Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար :	7 500

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Արարատի մարզի Հնաբերդ համայնքի
ավագանու 2019 թվականի նոյեմբերի 19-ի
թիվ 27-Ն որոշման

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Հ/Հ	Տեղական վճարների անվանումը	Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	1 000
2.	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	1 000
3.	Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար	1 000
4.	Աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար՝	
4.1	համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան	80
4.2	Համայնքում գործող իրավաբանակն անձանց համար	
4.2.1	Առևտրի,հանրային սննդի և բնակչության սպասարկամն այլ ծառայություններ՝ամսեկան /1 քառ.մ./	35
4.2.2	Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ՝ ամսեկան /1 քառ. մ./	15
4.2.3	Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ ամսեկան /1 քռ. մ./	4
4.2.4	Կրթական,մշակութային,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական շինություններ՝ ամսեկան /1 քառ. մ./	2
5	Համայնքի տարածքում ճանապարհների հիմնանորոգման շինարարության թույլտվություն տրամադրելու համար սահմանվում է տեղական վճար՝	
5.1	մինչև 1 000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող ճանապարհների համար	30 000

5.2	1001-3000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող ճանապարհների համար	45 000
5.3	3001 և ավելի քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող ճանապարհների համար	60 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050, էլ. Հասցե hnaberd.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 Նոյեմբերի 2019թվականի N 28-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասի պահանջներով , համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Հնաբերդ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

ԿԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒԵ Եկամտային մաս

1. Կարչական բյուջեի եկամտային մասի /Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար/, այդ թվում /Տեղական տուրքեր/ որից՝

ա/ Շինությունների շինարարության թույլտվության համար, որից Հիմնական շինությունների համար կետով նախատեսված 7.5 հազար դրամը փոփոխել և սահմանել ընդամենը 82.5 հազար դրամ.:

բ/ Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն կետով նախատեսված 1.0 հազար դրամը համարել չեղյալ:

գ/ Շինությունների քանդման թույլտվություն կետով նախատեսված 1.0 հազար դրամը համարել չեղյալ:

2. Կարչական բյուջեի եկամտային մասի /Գույքի վարձակալությունից մուտքեր/, որից /Այլ գույքի վարձակալություն/ կետով նախատեսված 60.0 հազար դրամը փոփոխել և սահմանել ընդամենը 400.0 հազար դրամ:

3. Կարչական բյուջեի եկամտային մասի /Գույքի վարձակալությունից մուտքեր/ բաժնում ավելացնել նոր կետ /Հողի վարձակալություն/ և սահմանել ընդամենը 11.0 հազար դրամ:

4. Կարչական բյուջեի եկամտային մասի /Մուտքեր տույժերից և տուգանքներից/, այդ թվում /Կարչական իրավախախտումներ/ կետով նախատեսված 600.0 հազար դրամը համարել չեղյալ:

5. Կարչական բյուջեի եկամտային մասը պակասեցնել 176.0 հազար դրամով և սահմանել ընդամենը 15 965.6 հազար դրամ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ Ծախսային մաս

1. Վարչական բյուջեի ծախսային մասը պակասեցնել 176.0 հազար դրամով և սահմանել ընդամենը 15 965.6 հազար դրամ:

2. Պակասեցված 176.0 հազար դրամը հանել 11.01.02.51 (Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից:

3. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 170.0 հազար դրամը տեղափոխել 06.04.01.52 (Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի վրա:

4. Վարչական բյուջեի ծախսային մասի 06.04.01.52 (Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից 30.0 հազար դրամ տեղափոխել նույն գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի վրա:

5. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ) գոր-ծառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 40.0 հազար դրամ տեղափոխել 10.07.01.54 (Սոցիալապես անապահով անձանց աջակցություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4726 (Հուղարկավորության նպաստներ) հոդվածի վրա:

6. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 30.0 հազար դրամ տեղափոխել 01.06.01.60 (Գույքի նկատմամբ իրավունքների գրանցում և տեղեկատվության տրամադրում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4241 (Մասնագիտական ծառայություններ) հոդվածի վրա:

7. Վարչական բյուջեի ծախսային մասի 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից 706.0 հազար դրամ տեղափոխել 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4112 (Պարգևատրումներ) հոդվածի վրա:

8. Վարչական բյուջեի ծախսային մասի 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից 149.5 հազար դրամ տեղափոխել 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4112 (Պարգևատրումներ) հոդվածի վրա:

9. Վարչական բյուջեի ծախսային մասի 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից 60.0 հազար դրամ տեղափոխել 08.02.05.52 (Թատերական ներկայացումներ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի վրա:

10. Վարչական բյուջեի ծախսային մասի 04.05.01.58 (Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից 34.5 հազար դրամ տեղափոխել 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածի վրա:

11. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ)

հոդվածից 191.6 հազար դրամ տեղափոխել 10.07.01.54 (Սոցիալապես անապահով անձանց աջակցություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4729 (Այլ նպաստներ) հոդվածի վրա:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ Եկամտային մաս

1. Ֆոնդային բյուջեի եկամտային մասի (Համայնքային սեփականություն համարվող հողի օտարումից եկամուտներ) կետը ավելացնել 169.38 հազար դրամով և սահմանել ընդամենը 359.88 հազար դրամ:

2. Ֆոնդային բյուջեի եկամտային մասը ավելացնել 169.38 հազար դրամով և սահմանել ընդամենը 1 798 963.6 դրամ:

Ծախսային մաս

1. Ֆոնդային բյուջեի ծախսային մասը ավելացնել 169.38 հազար դրամոն և սահմանել ընդամենը 1 798 963.6 դրամ:

2. Ավելացող 169.38 հազար դրամը հատկացնել 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 5122 (Կարչական սարքավորումներ) հոդվածին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ